Հավելված 2
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2023 թվականի մարտի 17-ի N 92-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի ապրիլի 26-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի տարածքում կամ թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 համարով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎ

Գործողություն	Սակագին
Հաճախորդների խումբ	ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1691-Ն որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթից օգտվելու իրավունք ունեցող անձինք:
Հաշվի բացում և սպասարկման վճար	Անվճար
Հաշվի արժույթ	ՀՀ դրամ
Կանխիկ գումարի մուտքագրում հաշվին	Համաձայն «Բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների» սակագների
Հաշվով հնարավոր գործառնությունների տեսակներ	**Հաշվի համալրում**
	Սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացվող գումարի փոխանցում
	կանխիկի մուտքագրում
	Հաշվի ելքագրում
	Հաշվում առկա դրամական միջոցները ենթակա են կանխիկացման ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1691-Ն որոշմամբ սահմանված դեպքերում
Կանխիկ գումարի տրամադրում/ելքագրում հաշվեհամարից	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում	Անվճար
Հաշվի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում	Անվճար
Տարեկան անվանական տոկոսադրույք	1%
Տարեկան տոկոսային եկամտաբերություն	1.005%
Տոկոսների հաշվարկման ձևը	Տոկոսադրույքը հաշվարկվում է հաշվի օրական մնացորդի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով

Հաշվի փակում	Անվճար
Այլ պայմաններ	Համաձայն «Բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների» սակագների

1. Սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցների օգտագործման ուղղություններն են
   1) հանգստի ապահովում՝ Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.
   2) հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները)
   3) ուսման վճար, որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները)առողջապահական փաթեթի մեջ չներառված լրացուցիչ ծառայությունների օգտվելու վճարի մարում, որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն
   4) մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու վճարի մարում, որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները)
   5) առողջապահական փաթեթի մեջ չներառված լրացուցիչ ծառայություններից օգտվելու վճարի մարում, որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն
   6) պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ամսական վճարի մարում, որից կարող է օգտվել սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները):
2. Սոցիալական փաթեթի շրջանակում ներկայացվող փաստաթղթերն են՝
   1) նույնականացման քարտ կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ
   2) կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք, որտեղ արտացոլված են ծառայությունը մատուցող կազմակերպության վավերապայմանները և ծառայությունն ստացող ֆիզիկական անձի տվյալները (անունը, ազգանունը, բնակության վայրը, քաղաքացիությունը, անձնագրի տվյալները (սերիան, համարը, վավերականության ժամկետը, ում կողմից է տրված), ծառայության տեսակը և փոխանցման նպատակը):
   3) հաշիվ-ապրանքագիր՝ համապատասխան վավերապայմաններով:
   4) սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, որը ներկայացվում է սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում և տրվում է սոցփաթեթի հաշիվն սպասարկող նոր բանկի կողմից
   5) տեղեկանք հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից օգտվելու դեպքում, երբ հիփոթեքային վարկը տրամադրված չէ Բանկի կողմից
   6) սոցփաթեթի հաշվետիրոջ ընտանիքի անմիջական անդամի սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու դեպքում գումարի փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր
   7) հանգստի ապահովման ծառայության վճարման փաստաթուղթ՝ հանգստի ապահովման ծառայության մատուցման ամսաթվի/ժամկետի մասին պարտադիր

նշումով, ընդ որում վճարման փաստաթուղթը Բանկ է ներկայացվում մինչ տվյալ ծառայությունից օգտվելը կամ ծառայության մատուցման ամսաթվից 15 օրից ոչ ուշ:

3. Սոցիալական փաթեթի հաշիվը բացվում է անժամկետ:
4. Սոցիալական փաթեթի ծառայությունների համար սոցփաթեթի հաշվից փոխանցումներ կատարվում են հաճախորդի կողմից առողջապահական փաթեթի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության բաղադրիչից օգտվելու մասին համապատասխան տեղեկանքի կամ արտոնյալ իրավունք/պայմանի առկայության վերաբերյալ համապատասխան փաստաթուղթի Բանկ ներկայացնելու դեպքում:
5. Սոցիալական փաթեթի հաշիվը առանց հաճախորդի դիմումի կարող է փակվել Բանկի կողմից, եթե մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնություններ չեն կատարվել և որոնք չունեն դրամական մնացորդ:
6. Սոցիալական փաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը:
7. Հաճախորդի կողմից բանկային հաշվի փակման դիմում ներկայացնելու դեպքում այն փակվում է 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում:
8. Սոցիալական փաթեթի հաշիվների բացման, վարման և դրամարկղային սպասարկման վերաբերյալ կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրով:
9. Սոցիալական փաթեթի հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսները կուտակվում են ամսական հաճախականությամբ:
10. Սոցիալական փաթեթի հաշիվների համար հաշվեգրվող տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով:
11. Սոցիալական փաթեթի հաշվի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են գումարը մուտքագրելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
12. Բանկին վերապահված է հաշվի դիմաց ստացված տոկոսներից օրենքով սահմանված կարգով եկամտային հարկը (10%) հաշվարկելու և վճարելու հարկային գործակալի իրավունքը:
13. **Ուշադրություն՝ Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝** Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:
14. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ հաշվարկված առանց եկամտային հարկի, 1% տարեկան պարզ տոկոսադրույքի դեպքում՝ APY=1.01%:

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}},$$

որտեղ՝

APY-ը տարեկան տոկոսային եկամտաբերությունն է,
A-ն՝ ավանդի սկզբնական գումարը,
n-ն՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարը,
N-ն՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարը (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված,
Kn-ը՝ ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքերը,
Dn-ը այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:
Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկի օրինակ.

Ավանդի ներդրման օրը՝ 01.08.2018թ.
Ավանդի գումարը՝ 72,000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսադրույքը՝ 1.00%
Ավանդի ժամկետը՝ 365 օր
Եկամտային հարկի չափը՝ 10%
Հաշվարկված տոկոսագումարը՝ 72,000 x 1.00% : 365 x 364 = 718.03
Եկամտային հարկը՝ 718.03 x 10% = 71.80
Ավանդատուի ստացած տոկոսային եկամուտը՝ 646.23 ՀՀ դրամ

15. Հաճախորդի հաշվից միջոցների դուրսգրումը կատարվում է ոչ ուշ, քան Հաճախորդի կողմից համապատասխան վճարման հանձնարարականը Բանկ ներկայացնելու հաջորդ բանկային օրը:
16. Հաճախորդի հաշվին ուղղված միջոցները մուտքագրվում են Հաճախորդի հաշվին, ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը:
17. Սոցիալական փաթեթի հաշվի քաղվածքները տրամադրվում են հաճախորդին առնվազն երեսնօրյա պարբերականությամբ հաճախորդի նախընտրած տարբերակով.
    - էլ. Փոստի միջոցով
    - առձեռն
    - փոստով:
18. Բանկը պարտավոր չէ Հաշվետիրոջը հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:
19. Հաշվով կատարված գործառնությունների դիմաց քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները սահմանվում են համաձայն Բանկի գործող «Բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ»ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագներ»-ի:
20. **Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7**

ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

21. Հաշվի քաղվածքը ստանալուց 15-օրյա ժամկետում հաշվի հետ կապված գործառնություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում հաճախորդը Բանկին կարող է ներկայացնել բողոքարկում: Նշված ժամանակահատվածում բողոքարկումները չստանալու դեպքում Բանկը քաղվածքը համարում է ընդունված: Բողոքարկումը ներկայացվում է Բանկին գրավոր դիմումի տեսքով: Սահմանված ժամկետում ստացված բողոքարկման դիմումը Բանկն ընդունում է կատարման՝ իրականացնելով տեղական և միջազգային վճարային համակարգի կանոններով սահմանված համապատասխան գործողությունները:
22. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և Բանկոմատներ:
23. Ֆիզիկական անձանց հետ Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBanking առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռահար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

Ուշադրություն

24. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սոցիալական փաթեթի հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող պարզ տոկոսադրույքի չափը՝ այն ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ տեղեկացնելով հաշվետիրոջը www.idbank.am Բանկի պաշտոնական կայք-էջում հրապարակելու միջոցով:
25. Բանկի և հաճախորդի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ Էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70-11-11 Ֆաքս՝ (+37410) 58-24-21 և կամ առևտրային արբիտրաժում («Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով):):
26. Սոցիալական փաթեթի հաշվում ներդրված միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց կամ հաճախորդի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց, բացառությամբ այն դեպքերի ,երբ այդ միջոցները հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար բանկի կողմից հաճախորդին վճարված տոկոսներից ձևավորված միջոցներ են, բացառությամբ նոտարի կամ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերի:
27. Սոցիալական փաթեթի հաշվում առկա միջոցների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:
28.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

29. Սոցիալական հաշվի բացման համար պահանջվող փաստաթղթեր՝
    - Հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթ Սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ)/նույնականացման քարտ/ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
30. Սույն տեղեկատվական ամփոփագրով չկարգավորվող դրույթները կարգավորվում են "ԱյԴի Բանկ" ՓԲԸ կողմից մատուցվող ծառայությունների «Բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ»ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագներ»ով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ